ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/97

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2024 թ. N 96

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք.Վարդենիս, Վ.Համբարձումյան փող. 19

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. փետրվարի 15-ին քննարկեց «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ (այսուհետ՝ ՎԲՀՔ, քոլեջ, ՄՈւՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	10 ապրիլի 2022 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	11 հուլիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	10-13 սեպտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	29 նոյեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	06 դեկտեմբերի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Քոլեջը բժշկական և հումանիտար ոլորտի միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակում: Իրականացվող կրթական ծրագրերն ունեն դեմոգրաֆիկ և ռազմավարական նշանակություն սահմանամերձ Վարդենիս քաղաքի և հարակից գյուղերի համար:

ՄԿԾ-ները մշակվել են Պետական կրթական չափորոշիչների (ՊԿՉ) հիման վրա, իսկ 2023 թվականից քոլեջն անցել է մոդուլային ծրագրերով ուսուցման: Նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա քոլեջը կատարել է ծրագրային փոփոխություններ՝ հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների առաջարկությունները: Հիմնական փոփոխություններն իրականացվել են հատուկ մասնագիտական դասընթացների շրջանակներում: Մոդուլային կրթական ծրագրերի մշակման գործընթացում ներգրավված են եղել գործատուները և քոլեջի պրակտիկ ոլորտի դասախոսները, որոնք միևնույն ժամանակ ոլորտի գործատուներ են: Քոլեջը 2022թ. իրականացրել է համեմատական վերլուծություն տեղական բժշկական քոլեջների նմանատիպ ծրագրերի հետ: ՄՈՒՀ-ը մշակել է կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ:

ՄՈՒՀ-ում ներդրված չէ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, այդուհանդերձ

դասախոսական կազմը փորձում է ավանդական մեթոդներին զուգահեռ կիրառել նաև գործնական կարողություններ ձևավորող ինտերակտիվ մեթոդներ:
Նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը Վարդենիսի բժշկական կենտրոնում ձեռք է բերել և կահավորել լսարան, որտեղ ուսանողներն իրականացնում են իրենց մասնագիտական դասընթացները և գործնական ժամերը: Ուսանողները հնարավորություն ունեն իրենց գործնական կարողությունները զարգացնել հիվանդանոցում՝ շփվելով իրական հիվանդների հետ:

Չնայած տարածաշրջանի ոչ այդքան հարմար դիրքավորմանը, քոլեջը կարողացել է հավաքագրել ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող դասախոսական կազմ կրթական ծրագրերի իրականացման համար: Վերջին տարիներին նկատվում դասախսական կազմի երիտասարդացում: Քոլեջում գործում է մենթորության համակարգը, որը նպաստում է երիտասարդ դասախոսների և մանկավարժական կրթություն չունեցող պրակտիկ մասնագետների կրթական գործընթացին առավել հեշտ ներգրավմանը: ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է դասախոսական կազմի կայունությունը, առկա է դաախոսական կազմի ռեզերվ:
Քոլեջն իր բյուջեից տրամադրում է միջոցներ դասախոսական անդձնակազմի տարեկան վերապատրաստումների համար:
ՎԲՀՔ-ն նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ակտիվ քայլեր է ձեռնարկել իր ռեսուրսային բազան համալրելու և բարեկարգելու ուղղությամբ, ֆինանսական միջոցներ է հատկացրել ուսումնանյութական բազան համալրելու նպատակով: Որոշ ՄԿԾ-ների ռեսուրսային բացը լրացնելու համար համագործակցում է գործատու կազմակերպությունների հետ՝ նրանց հնարավորություններն համատեղ օգտագործելու համար: Ձևավորվել են SMART լսարաններ, Քոլեջն ունի ռեսուրսների ձեռքբերման առաջնահերթություններ, ձեռնամուխ է եղել ուսանողական սրճարանի բացմանը: Գրադարանային հագեցվածությունն ապահովելու համար ներդրվել է էլեկտրոնային գրադարան, որը հասանելի է ուսանողներին:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը կարճ ժամանակահատվածում գործնական քայլեր է իրականացրել վերհանված թերությունները վերացնելու համար՝ գրանցելով առաջընթաց գրեթե բոլոր ոլորտներում:
ՎԲՀՔ-ն հստակեցրել է իր առաքելությունը, որն ապահովում է սահմանամերձ շրջանի համար միջին մասնագիտական կադրերի պատրաստումը: Քոլեջի առաքելությունն արտահայտում է տարածաշրջանի ներքին և արտաքին շահակիցների կարիքները: ՎԲՀՔ-ն մշակել և ընդունել է երկարաժամկետ 2021-2026 թթ. ռազմավարական ծրագիր, որում սահմանված են ռազմավարական նպատակները, խնդիրները և առաջընթացի գնահատման ցուցիչները: ՎԲՀՔ-ն վերանայել է իր կազմակերպական կառուցվածքը: Վերջին մեկ տարվա ընթացքում մշակվել են մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և ընթացակարգեր, պաշտոնի անձնագրեր: Սակայն քոլեջում իրականացվող գործընթացները դեռևս ամբողջությամբ համակարգված չեն, բացակայում են կարճաժամկետ պլանները, առկա չէ աշխատակիցների աշխատանքի

արդյունավետության գնահատման ցուցանիշներ: Որոշումները դեռևս չեն կայացվում հիմնավորված և վերլուծված տվյալների վրա:
Քոլեջը որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար մշակել է համապատասխան փաստաթղթային հենք: ՈԱ գործընթացները համակարգող փաստաթղթերը դեռ լիարժեք կիրառություն չեն գտել, շահակիցների կարիքների վերհանող մեխանիզմները խնդիր բացահայտող չեն, հարցաշարերը կարիք ունեն վերանայման: Որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ՝ իրականացվող գործընթացների մի մասը պլանավորման, մյուս՝ իրականացման փուլում են:
ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովումը, անում է որոշակի քայլեր համակարգի կայացման և զարգացման համար:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը*

ՎԲՀՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ: Վերջին երկու տարիներին նկատելի է ուսանողների թվաքանակի աճ, որին նպաստել է Քոլեջի ակտիվ համագործակցությունը դպրոցների հետ, ինչպես նաև շենքային պայմանների բարելավումը և ուսանողներին հեռավոր գյուղերից տեղափոխելու համար տրանսպորտային միջոցի տրամադրումը:
Առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանմանը նպաստող որոշակի մեխանիզմներ: Վարչական աշխատակիցները մշտապես հասանելի են ուսանողներին օժանդակություն տրամադրելու համար: Արդյունավետ գործում է կուրսղեկերի ինստիտուտը: Ուսումնասիրվում է շրջանավարտների աշխատանքի ընդունվելու ցուցանիշները, առկա է վերջին 3 տարիների շրջանավարտների բազա: Քոլեջում գործում է ուսանողների իրավունքները ներկայացնող խորհուրդ, ինչպես նաև կիրառվում են մատուցվող ծառայությունների որակի ապահովման որոշակի գործիքակազմ:
ՄՈՒՀ-ը չի սահմանել իր հետազոտական նպատակները, չի իրականացրել նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվությունները: Քոլեջում սակավ են հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքները, դասախոսական կազմը չի իրականացնում հետազոտական աշխատանքներ: Բացակայում է հետազոտություն-ուսումնառություն կապը, որպես հետազոտություն հանձնարարավում են ռեֆերատներ և կուրսային աշխատանքներ:
Նախորդ հավատարմագրումից հետո հաշվետվողականության ձևաչափերն ամբողջովին վերնայվել և համապատասխանեցվել են ռազմավարական նպատակներին: Ստորաբաժանումների համար ստեղծվել է հաշվետվողականության միասնական ձևաչափ: Գործարկվել է պաշտոնական կայքէջը: Առկա են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ գործատուների, շրջանավարտների և ներքին շահակիցների հետ:
Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները Քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից է, որի շրջանակներում ՎԲՀՔ-ն քայլեր է ձեռնարկել նոր գործընկերների ձեռքբերման ուղղությամբ: Վերջին երկու տարիներին քոլեջը կազմակերպել է փոխադարձ այցեր

նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններ, ինչպես նաև ակտիվ համագործակել է տեղական գործընկերների, գործատուների, հիվանդանոցի, պոլիկլինիկայի, դպրոցների հետ, կնքել հուշագրեր և պայմանագրեր: Համագործակցության պայմանգրերը փոխշահավետ են երկու կողմերի համար. գործատուն թափուր հաստիքի դեպքում դիմում է քոլեջին և ձեռք է բերում որակյալ կադրեր, իսկ ուսումնական հաստատությունը՝ շրջանավարտներին ապահովում է աշխատանքով:

Քոլեջը փորձեր է իրականացրել միջազգային գործընկերներ գտնելու և համագործակցության շրջանակ ստեղծելու ուղղությամբ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում քոլեջը որակական նոր ձեռքբերումներ կունենա:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - Ռազմավարական պլանավորման գործընթացում տրամադրվող ֆինանսական և նյութական ռեսուրսների հստակեցմանը,
   - ինտերակտիվ դասավանդման մեթոդների բազմազանեցմանը՝ նպաստելով ուսանողների վերլուծական մտքի զարգամանը,
   - ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերը վերանայելու անհրաժեշտությանը ՝ ներառելով գործնական կարողությունները և հմտությունները ստուգող հարցեր,
   - ուսանողի ստեղծագործական, վերլուծական, հետազոտական կարողությունների զարգացմանը նպաստող հանձնարարականների մշակմանը,
   - էլեկտրոնային գրադարանը հայալեզու և օտարալեզու մասնագիտական գրականությամբ համալրելու անհրաժեշտությանը,
   - ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների ներդրմանը, Ուսանողական խորհրդի աշխատանքների ակտիվացմանը,
   - դասախոսների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը,
   - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2024 թ. փետրվարի 15

ք.Երևան